Գինեգործությունը չնչին չափով էր տարածված միայն Կապանում և նույնիսկ տեղական գինեգործությանը չէր բավարարում։

Պտղաբուծության շատ սահմանափակ զարգացումը Զանգեզուրում անըսպասելի էր այն պատճառով, որ գավառի անտառներում բուսաբանները հայտնաբերել են պտղատու վայրի ծառերի մեծ բազմազանություն։ Միայն վայրի տանձենիների մի քանի տասնյակ տեսակներ։ Թվում էր թե դրանք պիտի հիմք ծառայեին տեղական տեսակների կուլտուրական մշակման համար։ Առավել որ որոշ չափով պիտի ազդած լիներ այնպիսի բարձր պտղաբուծական շրջանի հարևանությունը, ինչպիսին է Մեղրին։ Սակայն մինչև այսօր էլ ոչ միայն Սիսիանի, ինչպես նաև Գորիսի շրջանները միրգը ստանում էին դրսից, գլխավորապես Նախիջևանի շրջանից Սիսիանի (Բիչենաղի) լեռնանցքով, այլև կլիմայական պայմաններով պտղաբուծության զարգացման համար ավելի նպաստավոր պայմանների մեջ գտնվող Կապանը նույնպես չուներ իր շրջանին բավարարող մրգատու այգիներ և մրգեղենը ստանում էր Մեղրու շրջանից։ Ճամփորդը Մեղրու շրջանից Ողջի (Օխչի) անցնելիս Տաշտունու (Դիբագլուի) լեռնանցքին պատահում էր ձիերի, ջորիների, էշերի քարավանների, որոնք տանում էին ծիրան, խաղող, դեղձ, տանձ և այլ պտուղներ, fրացնէրավ բարձած, Կապանում վաճառելու համար։

Շիկահող գյուղում կար մի այնպիսի հետաքրքրական երևույթ, որը գաղափար էր տալիս թե ինչպես անտառը նախնական հասարակության մեջ կարող էր «այգու», «պարտեզի» վերածվել, այսինքն՝ գաղափար տալ այգեգործության ծագման մասին։ Այստեղ անխախտ պահվող և հնուց սրբադարձված սովորություն էր, որ հենց անտառի մեջ պատվաստվում էր վայրի խնձորենին կամ տանձենին և այդ պատվաստված ծառը համարվում էր պատվաստողի սեփականություն, որին ուրիշն արդեն ձեռք չէր կարող տալ։ Այս եղանակով նախնական դարերումն էլ անտառները կարող էին փոխվել պարտեզների, աչքի առաջ ունենալով և այն, որ անտառում ծառեր կտրելիս՝ առաջին հերթին ոչնչացվում էին անպտուղ ծառերը, իսկ մրգատուներից այնպիսիները, որոնց պտուղն անհամ էր լինում և ընդհակառակը, խնամք էր տարվում քաղցր մրգատու վայրի ծառերի մասին։ Այստեղ կրկնվում էր այն պրոցեսը, որով վայրի հոտը դառնում էր ընտանի հոտ և նրա անասունի տեսակը աղնվացվում էր։ Նախնական որսորդը՝ վայրի հոտի ետևից ընկած և այդ հոտն իր խմբի սեփականությունը համարելով՝ նախ սպանում էր նրա թույլ տեսակներին և ձագ չունեցողներին, մնացածին— ուժեղին և ձագ ունեցողներին, պաշտպանում էր գազաններից և մարդկային այլ խմբերի հարձակումներից։ Այսպիսով աղնվացվում էր այդ հոտը։

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հունդը զարթեցնելու համար հնագույն ձևն էր սեփական մարմնի ջերմությամբ նրան տաքացնելը— փաթաթում էին կիթերը մի լաթի մեջ և պահում կրծքին շապիկի տակ և օրական մի քանի անգամ ստուգում՝ արդյոք չեն արթնացել։ Ավելի նոր է թղթի կամ լաթի վրա հունդը փռելն ու օջախի մոտ կամ արևի տակ պահելը[68]։ Արթնացած շերամը փոխադրվում էր փրցմինակ կամ

[68] СМОМПК, вып. XXV, отд. II, էջ 30—31 և Зелинский С. П., նշված աշխ., էջ 96։